

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

\_\_\_\_\_ Տ. Դավթյան

\_\_\_\_\_ Գ. Խաչատրյան

11 հոկտեմբերի 2010 թ. N 672-Ն

4 հոկտեմբերի 2010 թ. N 9

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ՝  
ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ ԴԱՍԱԿԱՐԳԻ  
ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԴԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ *պաշտոնապես պարզաբանում եմ*.

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ դասակարգչի (ԱՏԳ ԱԱ) ծածկագրերին ապրանքները դասվում են, եթե այդ ապրանքները դասակարգչի մեկնաբանման կանոններին համապատասխան համարվում են ընդգրկված դասակարգչի համապատասխան ապրանքախմբի ապրանքների ցանկում: Այս կամ այն ապրանքը «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող ապրանքախմբի ծածկագրին դասվելու դեպքում դրա մասով կիրառելի են տվյալ ապրանքախմբի համար օրենքով սահմանվող դրույթները:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ դասակարգիչը, որը հաստատվել է 1995 թվականի նոյեմբերի 3-ին Մոսկվայում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի մասին» համաձայնագրով՝ վավերացված Հայաստանի Հանրապետության Նախագահի 2000 թվականի հուլիսի 3-ի N ՆՀ-626 հրամանագրով: